ՀՏԴ 37.018.1:316.624
https://doi.org/10.67819/30453267-26.1yd1-05

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԵՂՎՈՂ ՎԱՐԿԻ ՇՏԿՄԱՆ ՄԻՋՈՑ

Նատալիա Է. Գևորգյան
Մ. Մաշտոցի անվան համալսարան,
Երևան, Հերացի փ., 2/1 շենք,
e.mail: natalya.gevorgyan@sportedu.am

Ամփոփում

Աշխատանքում հետազոտվել է ընտանեկան դաստիարակության եզրույթում վարքային շեղումների առաջացման հոգեբանական հիմքերը: Հետազոտվել է դեռահասի աշխարհընկալման կայուն ձևավորման համար լիարժեք ընտանիքում դաստիարակվելու հիմնախնդիրը, որի բացակայությունը ենթադրում է հակասոցիալական վարքագծի, հասարակայնորեն ընդունելի նորմերի խախտման բարդույթ: Հասարակաքաղաքական փոփոխություններով պայմանավորված փոխվել են միջավայրի սոցիալհոգեբանական առանձնահատկությունները, այդ թվում՝ ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը՝ ազդող դեռահասի դաստիարակության վրա, ինչի արդյունքում երեխաներն ու դեռահասները առավել խոցելի խմբերում են հայտնվել: Այս պարագայում վարքային շեղումների ուսումնասիրությունն ունի բացառիկ կարևորություն՝ հատկապես հոգեբանական տեսանկյունից: Հետազոտվել են շեղվող վարքի առաջացման առաջնային գործոնները և առաջադրվել են կանխարգելման միջոցները:

Հիմնաբառեր. անբարենպաստ ընտանիք, շեղվող վարք, քրեածին, կարգազանց, ասոցիալ վարք, հոր կերպար, բարոյահոգեբանական, բարոյահիրավական վիճակ, դեռահաս:

Նորույթը

Բազմաթիվ հոգեբաններ ուսումնասիրել են միջավայրի ազդեցությամբ պայմանավորված անհատի վարքային շեղումների ռիսկերը:

Զ. Լոմբրոզոն հիմնավորել էր հանցագործությունների հիմքում կենսաբանական գործոնների դերակատարման մասին՝ մնալով կենսաբանական «գռեհիկ մատերիալիզմի» կողմանկից:

Ավելի ուշ, Լամբրոզոյի աշխատությունների հիման վրա, Է. Ֆերրին զարգացրեց հայեցակետ մանկական հանցավորությանը նպաստող սոցիալական գործոնների վերաբերյալ՝ դառնալով հանցավորության կենսասոցիալական տեսության հիմնադիր:

Բ. Ֆ. Սքիները պնդում էր, որ մարդու վարքը ձևավորվում է միջավայրի ազդեցությամբ, կառավարվում է միջավայրի կողմից և կանխատեսելի է: Նա միաժամանակ ժխտում էր մարդու վարքի ներքին «ինքնավար» գործոններով[1] պայմանավորված լինելը:

Դեռահասների վարքային շեղումները կենսաբանական և սոցիալական գործոնների ազդեցության հետևանք են՝ հատկապես անբարենպաստ միջավայրի և ընտանիքի բացասական ներգործության:

Մենք հետազոտել ենք անբարենպաստ ընտանիքի գործոնով պայմանավորված վարքային շեղումները հետևյալ համատեքստում.

- ընտանիքի ազդեցությունը դեռահասի հոգեբանության վրա,
- շեղվող վարքի առաջացման նախադրյալները,
- հոր դերի գերակայությունը դեռահասի զարգացման, վարքի ձևավորման գործընթացում,
- անհամատեղելի ծնողների բացասական ազդեցությունը դեռահասի դաստիարակության, բարոյահոգեբանական վիճակի վրա,
- դեռահասի բարոյահոգեբանական անկմամբ պայմանավորված վարքային դրսևորումները:

Հետազոտության արդյունքում բացահայտել ենք դեռահասի հոր կերպարի գործոնի բացակայության գերակայությունը որպես շեղվող վարքի առաջացման նախադրյալ:

Ներածություն

Ժամանակակից բարդ փոփոխությունների պայմաններում հասարակությունը չի հասցնում հարմարվել տիրող իրավիճակին: Հասարակաքաղաքական փոփոխությունները, այլ երկրներից բնակչության զանգվածային ներհոսքը, տեղեկատվական հոսքերը ենթադրում են իրավիճակներ՝ գնահատվող օգտակարության և վնասի սանդղակներով: Փոխվել են ընտանիքի կայունությամբ պայմանավորված բարոյահոգեբանական ազդեցությունները մատաղ սերնդի դաստիարակության վրա:

Վ. Սուխոմլինսկին հետազոտել է ցանկացած տարիքում դրսևորվող առաջնային վարքագծերը՝ արտահայտված առողջ բարոյահոգեբանական առանձնահատկություններով կամ շեղումներով:

Ռուս գիտնական Ա.Ի. Զախարովը, հետազոտելով հոր ալկոհոլամոլության ազդեցությունը երեխայի բացասական հուզական զգայունության վրա, գրում է. «Հիմնական գործոնը, որով կարելի բացատրել այդ երևույթի առկայությունը տղաների և ոչ թե աղջիկների մեջ այն է, որ այդ տղաները դերային նույնականացման տարիքային պահանջով միջնորդավորված յուրահատուկ ձևով հարմարվել են սպառնացող, իրեն անտրամաբանական պահող հարբած հոր կերպարին, ինչի համեմատությամբ վախը զանազան երևակայական հրեշների կամ ուրվականների հանդեպ ուղղակի խամրում է…»[2]: Ըստ Ա. Ի. Զախարովի, դեռահասի նյարդայնացմանը նպաստում են հոր անտարբերությունը և թույլ բնավորությունը: Հեղինակը նշում է. երբ կանացի, հատկապես տատիկների, դաստիարակությունը գերակայում է տղամարդկային դաստիարակության նկատմամբ, հաճախ դեռահասի մոտ նևրոզ է զարգանում[2]: Ըստ հեղինակի մանկության շրջանում նույն սեռի ծնողի հետ ոչ բավարար կամ բացասական դերային նույնականացումը բարդույթներ է

առաջացնում միջանձնային հարաբերություններում, մինչև իսկ ընտանիքում սեփական երեխաների հետ շփվելիս: Նման փոխհարաբերությունն ավելի բնորոշ է այն հոր տեսակին, ով մանկության շրջանում ծնողի հետ առողջ շփվելու փորձառություն չի ունեցել, այսինքն «հոր զավակ չի եղել, հիմա էլ զավակի հայր չի դարձել»[2]:

Ըստ Լ. Գրեկոյի, Թ. Մորիսի 8-13 տարեկան այն դեռահասները, ովքեր նյարդային վարք, հուզական խանգարումներ, մասնավորապես դեպրեսիա ունեն, իրենց հայրերին գնահատում են որպես ավտորիտար անձիք. իրենց դաստիարակությամբ հազվադեպ զբաղվող, ջերմություն չցուցաբերող[3]:

Դ. Վիտկինի հետազոտությունները վկայում են դեռահասի դաստիարակությանը հոր ակտիվ մասնակցության՝ այդ թվում համատեղ զբոսանքների, խաղերի, ջերմ վերաբերմունքի, արդյունքում ձևավորվող ինքնավստահության, տղաների առնականության և աղջիկների կանացիության մասին[4]:

Բիլլերի հետազոտությունները վկայում են հոր և զավակի ջերմ հարաբերությունների եզրույթում ձևավորվող պատշաճ ինքնագնահատականի մասին: Ըստ որի դեռահասները միջանձնային հարաբերություններում խնդիրներ չեն ունենում, ուսման մեջ դրսևորում են առավել բարձր առաջադիմություն:

Ծնողներից յուրաքանչյուրի հետ դեռահասի շփումը, խաղերը էապես տարբերվում են: Ընդ որում հայրական խաղերը նպաստում են երեխայի մտավոր զարգացմանը[5]: Վ. Ֆտենակիսի հետազոտությունները վկայում են հոր դաստիարակչական ներգործության ներքո տղաների ճանաչողական զարգացման մասին:

Ըստ Ե.Պ.Իլյինի հոր դաստիարակությամբ դեռահասները ունեն առավել բարձր ինքնագնահատական, ֆիզիկական աճ և կայուն ես-ի ընկալում, իսկ հայրերից օտարացածները՝ ցածր ինքնագնահատական[6]:

Վ. Ն. Դրուժինիի[7] հետազոտություններում հոր դաստիարակչական դերակատարումը կարևորվում է հատկապես ժամանակակից ընտանիքում: Այս առումով Ն. Ա. Կորկինան գրում է. «Հետազոտվող հիմնախնդրի մշակութափիլիսոփայական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու երկու համագոյակցող միտումներ. մի կողմից հոր դերի և ազդեցության թուլացումը՝ քողարկված անհայրություն, ոչ լիարժեք, մայրական ընտանիքներ, մյուս կողմից տղամարդկանց և կանանց կենսական դերերի փոփոխությունը, առնականության և կանացիության սոցիոմշակութային ստերեոտիպերի փոփոխությունը՝ պայմանավորված ժամանակակից պայմաններում մշակութային պարադիգմերի փոփոխությամբ»[8]:

Հետազոտվել են ընտանիքում հոր բացակայության ազդեցությունը երեխայի անձնային հատկանիշների վրա[9, 10, 11]: Բացահայտվել են անհայր ընտանիքում հակասոցիալական վարքի ձևավորման, զանազան վարքային խանգարումների երևույթները: Հետազոտությունները վկայում են անհայր մեծացած տղաների սեռային նույնականացման խնդրում ունեցած դժվարությունների մասին[12]:

Է.Հոֆմանի հետազոտությունները ցույց են տալիս որ ահռելի է հոր դերը երեխայի բարոյական զարգացման գործում, իսկ հիմնական մեխանիզմը հեղինակը համարում է նույնացումը: Հայրը նաև հանդիսանում է տան ««օրենքը». սահմանում է կարգապահական նորմերը, խրախուսում է վարքի որոշ ձևեր և պատժում անցանկալի վարքը[5]:

Ըստ Օ. Չիրկովայի հայրը մեծ դերակատարում ունի երեխայի ինքնուրույնության և պատասխանատվության ձևավորման խնդրում [13]:

Ուսումնասիրելով Ս. Արզումնայանի[14, 15, 16], Ա. Արզումանյանի[17], Գ. Բադալյանի[18], Գ. Խաչիկյանի[19] և ուրիշների հոգեբանա-քրեաբանական հետազոտությունները անչափահասների օրինախախտումների վերաբերյալ, փաստագրում ենք, որ ոչ օրինաչափ վարք դրսևորող դեռահասներին բնորոշ բազմաթիվ որակներ և հատկանիշներ սոցիալական ախտահարվածության արդյունք են, ինչի հետազոտությունն ու կանխարգելումը այսօրվա հրամայականն է:

Հետազոտության մեթոդաբանությունը

Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունների հետազոտության, առաջնային վարքային շեղումների գնահատման և կանխարգելման հետազոտությունը իրականացրել ենք գիտական գրականության ուսումնասիրության, վերլուծական հոգեբանության դիտարկումների՝ գիտական վերացարկման, համադրության և համեմատական վերլուծությունների, և պրոյեկտիվ թեստավորումների մեթոդաբանությամբ:

Հետազոտություն

Ցանկացած տարիքում դրսևորվող առաջնային վարքագծերի առողջ և կայուն ձևավորման համար ծնողներին ցուցվում է դեռահասների սեռային պատկանելության դաստիարակությունը՝ տարբերակված աղջիկների և տղաների, ապագա մոր և հոր, հասարակության մեջ սոցիալական գործառույթներ կրողների[20]: Դեռահասի աշխարհընկալման կայուն ձևավորման համար կարևոր է լիարժեք ընտանիքում հոր և մոր հոգածությամբ դաստիարակվելը՝ մտածողության երկու ձևերի՝ տղամարդու և կնոջ, ազդեցության ներքո: Ընտանիքում հոր բացակայությունը բարոյահոգեբանական խնդիր է: Այն բացասաբար է ազդում երկու սեռերի դեռահասների մտածողության, աշխարհայացքային ըմբռնումների վրա, ինչպես նաև մոր հոգեկերտվածքի վրա: Աղջկա հայեցողական ըմբռնումներում ընտանեկան կյանքն առանց հոր ապրելու, իր թիկունքում առնականության, ուժի պակասը զգալու ցավը ենթադրում է բացասական դիրքորոշում ընտանիքի վերաբերյալ: Միայն մոր կողմից դաստիարակվող տղան հոր բացակայությամբ ձեռք է բերում թերի տղամարդկային կեցվածք ու վարքագիծ: Առանց ամուսնու կնոջը հատկանշական են տղամարդուն բնորոշ վճռականությունը, ձգվածությունը, նախաձեռնողականությունը, ինչի հետևանքով իշխում է տանը, բռնանում է տղայի և աղջկա վրա[20]: Չափից ավելի հոգատարությունը, գերհսկողությունը, բազմաթիվ այլ միջոցառումներ ջախջախում են դեռահասի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, առաջացնում են վախեր կյանքի նկատմամբ: Մոր գերհոգնածությունը առավել բացասաբար է անդրադառնում տղայի վրա, ում մոտ առաջանում է անհանգստություն, անվճռականություն սերտաճող թերարժեքության զգացողության: Այս դեպքում շեղվող վարքը արտահայտվում է վախերի, ագրեսիայի, կախվածության հակասոցիալական վարքագծի, հասարակայնորեն ընդունելի նորմերի խախտման ձևերով:

Միայն մոր դաստիարակությամբ դեռահասի ինտելեկտուալ մտածողությունը սահմանափակ է: Նման դեռահասին հատկանշական են լեզվական հմտությունները, սակայն մաթեմատիկական

տրամաբանական մտածողությունը թույլ է. դժվար է ընկալում բարդ խնդիրները և գտնում լուծման ուղիները:

Դեռահասի հոգեկերտվածքի վրա հոր բացակայությունը արտահայտվում է.

• Էմոցիոնալ ազդեցությամբ՝ լքվածության և անվստահության դրսևորումներով. Դեռահասները հոր բացակայությունը ընկալում են անվստահություն սեփական ուժերի հանդեպ, ինչը ծնում է ցածր ինքնագնահատական: Այս պարագայում հատկապես տուժում է տղաների արժեքային համակարգը: Առաջացած սթրեսն ու դեպրեսիան կարող են ենթադրել շեղվող վարքի տարբեր դրսևորումներ:

• Սոցիալական ազդեցությամբ. հոր հետ հաղորդակցման եզրույթում աղջիկը ճանաչում է արական սեռին հատկանշական ընդհանուր գծերը, առավել հստակ գիտակցում է իր կանացի էությունը: Հայրը ընդլայնում է աղջկա աշխարհայացքային ըմբռնումները, ամբողջացնում արդեն հայտնի երևույթների շրջանակը[20]:

• Մոտիվացիոն ազդեցությամբ. հայրը որդու համար իսկական տղամարդու կերպար է, ում շնորհիվ տղան յուրացնում է արիության, ուժեղ կամքի հատկանիշները, բարի և ուշադիր վերաբերմունքը կանանց հանդեպ, ինչպես նաև ընտանիքի անդամների հանդեպ հոգատարության, պատասխանատվության հատկանիշը[20]: Այն դեռահասները ովքեր չունեն հոր ներկայությունը իրենց կյանքում, շատ հաճախ վաղաժամ իրենց ուսերին են կրում ընտանիքի հոգսը՝ երկրորդ պլան մղելով ուսումնառության գործընթացը:

Ծնողական դերի բացակայությունը խարխլում է դեռահասի սիրո, վստահության և ինքնության ձևավորման հիմքերը: Ըստ Էրիկ Էրիքսոնի հոգեսոցիալական տեսության՝ վաղ շրջանում անվտանգության ու վստահության ձևավորումը առանցքային է առողջ հոգեբանությամբ զարգացման համար: Հայրական կերպարի բացակայության դեպքում տղաները կարող են չունենալ տղամարդկային մոդել, իսկ աղջիկները ուժեղ հենարան: Այս դեպքում առաջանում են վարքայիին շեղումներ՝ ագրեսիայի, հակասոցիալական վարքի ձևերով:

Դեռահասություն տարիքում ֆիզիկական փոփոխություններն ակնառու են դեռահասների և շրջապատող հասարակության համար: Ֆիզիկական զարգացումը զգալիորեն ազդում է դեռահասի կյանքի որակի վրա, փոխում դեռահասի վերաբերմունքը սեփական մարմնի նկատմամբ, մեծահասակի վերաբերմունքը դեռահասի հանդեպ: Դեռահասությանը բնորոշ է ֆիզիկական աճի թռիչքը, որը միջինում տևում է 24-36 ամիս: Ընդհանուր առմամբ աճի սկիզբը, տևողությունը, աճի արագությունը անհատական են տարբեր դեռահասների համար՝ կախված ժառանգականության գործոնից, սեռից, սննդային վարքագծից, ֆիզիկական ակտիվության մակարդակից և այլ արտաքին գործոններից[21]: Անբարենպաստ սոցիալ-տնտեսական կարգավիճակը, անբարենպաստ ընտանեկան միջավայրը, գերլարվածությունը դպրոցում, սթրեսները կարող են ազդել զարգացման արագության վրա: Ապացուցված է, որ դեռահասության տարիքում սոցիալական պայմանների կտրուկ բարելավումը, այդ թվում՝ մանկատնից ընտանիք որդեգրումը, ի զորու է առաջացնելու զարգացման ցուցանիշների կտրուկ աճ: Նորմալ ֆիզիկական զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է բալանսավորված սնունդ, ֆիզիկական ակտիվություն, լիարժեք քուն, ընտանիքի առողջ հոգեսոցիալական մթնոլորտ[21]: Դեռահասության տարիքը՝ 11-16 տարեկան, անցումային է կենսաբանական իմաստով. այն սեռական հասունացման շրջանն է, որին զուգահեռ հասունանում են օրգանիզմի այլ կենսաբանական համակարգերը:

Դեռահասային փուլն առաջնային սոցիալական շրջան: Է: Այդ տարիքի դեռահասները գտնվում են ծնողների խնամքի տակ և հիմնականում զբաղվում են ուսումնառությամբ[22]: Հոգեբանության մեջ բեկումնային կամ ճգնաժամային շրջանում «դժվար» դեռահասները բացասական վերաբերմունք են ցուցաբերում ծնողների, մակավարժների, համադասարանցիների, ուսումնառության, աշխատանքի նկատմամբ: Հասունացման շրջանն ինքնին «տկարության» փուլ չէ, սակայն այն կարող է ենթադրել զգալիորեն խորը հոգեբանական խնդիրներ: Դեռահասության ճգնաժամը գնահատվում է դեռահասների և իրականության միջև հարաբերությունների աղճատումների իրավիճակ, որտեղ ի հայտ է գալիս ես-ի օտարացման կամ միայնության զգացումը, որպես ձևավորվող անհատականության ոչ ճիշտ ընկալման, բռնության արդյունք:

Դեռահասության տարիքում ձևավորվող հասունության զգայնությունը երիտասարդի ինքնագիտակցությանը միտվող սաղմնային իրավիճակ է, որը ընտանիքի, միջավայրի ազդեցության ներքո ձևավորում է դիմային կերտվածք՝ ստեղծելու միջանձնային հարաբերություններ և փոխհարաբերվելու միջավայրի հետ[23]: Ըստ Ռ.Ս.Նեմովի անձի տարիքային զարգացման ճգնաժամը կամ հոգեկան զարգացման հապաղումը ուղեկցվում է դեպրեսիայով, անբավարվածությամբ, ներքին՝ անձնային, և արտաքին՝ միջանձնային դժվար լուծելի խնդիրներով»[22]: Դեռահասության հասունության զգայնության համակարգում ակնառու են մարմնամկանային հակումները, որոնք պատանիության շրջանում արտահայտվում են սուր դրսևորումներով:

Դեռահասի, պատանու անհատական ակտիվությունը պայմանավորված է անձնային պահանջմունքներով, ձգտումներով, հետաքրքրություններով և իդեալներով: Դրանք վարքային դրսևորումներ են՝ վերաճող անձի յուրօրինակ վերաբերմունքի շրջապատող իրականության հանդեպ[22]: Անձի սոցիալապես ախտահարված դիմանկարը, խաթարված սոցիալական գիտակցությունը հետևանք են դեռահասության տարիքում ընտանեկան դաստիարակության թերացումների, երբեմն էլ հակամանկավարժական դաստիարակության, երբ դեռահասը իր վրա կրում է հանցավոր խմբի, հանցածին տարրի շարունակական ազդեցությունը:

Անձի սոցիալականացումը բազմաբնույթ որակների և հատկանիշների, բարոյական սկզբունքների և սոցիալական նորմերի ձևավորման գործընթաց է ի նպաստ հասարակայնորեն ընդունված արժեքների պահպանության, ազգապահպանության: Այս համատեքստում նպատակները, ձգտումները, դրդապատճառները անձնային աճի, ինքնահաստատման և սեփական ճակատագրի կերտման գրավականն են[21]: Վարքի շեղման գենեզիսի հիմքում ընտանիքի առողջ հուզազգացմունքային դաշտի բացակայությունն է, դեռահաս-ծնող բացասական հուզական սիմբիոզի հոգեվիճակը: Վերջինի պարբերաբար կրկնությունը վերաճում է դեռահասի կամային հատկությունների ձևավորման ընկճախտի, ինչը դեռահասի քրեածին վարքի առաջացման հիմնաքարն է[21]:

Ս.Ջ. Արզումանյանը անձի սոցիալական <u>վարքի</u> աստիճանական շեղման հոգեբանական օրինաչափությունները ներկայացնում է.

- շեղվող վարք,
- կարգազանց վարք,
- անկարգապահ վարք,
- բարոյազանց վարք,
- իրավախախտ վարք,

- քրեածին վարք, հանցածին վարք ձևերով:

Այս համատեքստում փոքր, տանելի անկարգությունները վերաճում են վարվեցողության նորմերի խախտման, բարոյանորմերի, իրավունքի նորմերի ոտնահարման, քրեածին վարքի, ինչի խորացումը ենթադրում է ծանր հանցագործությունների իրականացում[24]:

Յուրաքանչյուր մանկավարժի, ուսուցչի, հոգեբանի, մարզչի խնդիրն է օգնել դեռահասին զարգացման ճանապարհին, նպաստել մարդկային հատկանիշների ձևավորմանը: Արժեքային նորագոյացումներում է կայանում վարքային կողմնորոշումների բարոյական իմաստը:

Ասոցիալ կամ շեղվող վարքը հաճախ վկայում է այն մասին, որ անձը դաստիարակվել է այնպիսի ընտանիքում, որտեղ սխալ է կազմակերպված կենցաղը, պահպանված չեն ավանդույթները, առկա են ընտանեկան կոնֆլիկտներ, բարոյահոգեբանական լարված հարաբերություններ: Բնականաբար, նման ընտանիքները համարվում են սոցիալ-հոգեբանական առումով անբարենպաստ:

Անբարենպաստ ընտանիքի հոգեբանական գործոնը կնիքվում է դեռահասի անձնային հատկանիշների վրա՝ չկամության, չարության, ագրեսիվության ձևերով՝ անկախ օրինազանց կամ իրավախախտ վարքից[21]:

Հետազոտության արդյունքում տարբերակել ենք անբարենպաստ ընտանիքների երեք հիմնական խմբեր, որոնք դեռահասի հոգեկերտվածքում առաջացնում են որոշակի վարքային շեղումներ.

1. Ծնողները գիտակցում են իրենց ընտանիքի անբարենպաստությունը՝ դեռահասին առողջ բարոյահոգեբանությամբ ընտանեկան միջավայրում դաստիարակելու համար: Այդ գիտակցմամբ նրանք ջանում են ցանկացած միջոցներով ուղղորդել երեխայի առողջ անձնային հատկանիշների ձևավորումը, խմբագրել սեփական վարքագիծը՝ երեխաների ներկայությամբ քողարկելով իրենց միջև տարաձայնությունները, խուսափելով վեճերից: Վարքագծային շեղումների, սայթաքումների դեպքում դիմում են մանկավարժների օգնությանը: Պետք է փաստել,որ հաճախ կարողանում են կասեցնել երեխայի վարքի շեղումները: Սեփական անձի վարքային թերությունների գիտակցումը ենթադրում է ընտանիքի անբարենպաստությունը հաղթահարելու սրտացավ մղում՝ երեխայի մեջ իրենց շարունակությունը չտեսնելու ձգտումով[21]: Այս պարագայում անբարենպաստ ընտանիքը սոցիալական ակտիվությամբ հատուցում է երեխայի ընտանեկան ջերմության ու սիրո պակասը, որը գոյացել է վեճերի, տարաձայնությունների մթնոլորտում:
2. Աբարենպաստ ընտանիքի ծնողները չեն ընդունում իրենց վարքագծային սխալները, և ընտանիքի անբարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտը բացասաբար է անդրադառնում երեխայի վրա. վտանգում է առողջ հոգեկերտվածքի ձևավորումը, նպաստում է անօրեն վարքի ընտրությանը: Նմանօրինակ անբարենպաստ ընտանիքում բացասական ներգործությունները ընկալելու հակվածությամբ մեծացող դեռահասները ապագա իրավախախտներ են: Այս հանգամանքը առանձնակի հիմնավորման կարիք չունի, քանզի իրենց վարքագծային սխալները չընդունող ծնողները իրենց ասոցիալ գործունեությամբ չեն նկատում դեռահասի այլախոհումները և շեղված վարքի դրսևորումները: Սակայն բացահայտելով վերջինիս առկայությունը գնում են զոհաբերությունների երեխայի վարքի բարոյահրավական խաթարումները կանխելու համար[21]:

3. Անբարենպաստ ընտանիքի քրեաբանական,սոցախտածին բնույթը՝ անդամների համարժեք հարաբերություններով և դիրքորոշումներով, ենթադրում է գիտակցաբար հանցագործ ու քրեորեն դատապարտելի անձանց ձևավորում: Այդպիսի ընտանիքի ծնողները առհասարակ չեն ընդունում իրենց վարքի բարոյազանցությունն ու քրեորեն հետապնդելիությունը, հաճախ իրենց գործողություններում ներգրավում են զավակներին: Երբեմն բարոյականության, օրենքի գերակայության առկայությունը, սեփական կյանքի վարկանիշային իմաստավորումը այդպիսի ծնողներին ստիպում է գիտակցելու իրենց վարքային քրեաբանական սխալները, ինչը սերունդների բարոյաիրավական, քրեածին վարքային խաթարումները կանխելու միջոց է[21]:

Անբարենպաստ ընտանիքների ծնողների զգալի մասը չի կողմնորոշվում ընտանեկան կյանքի կազմակերպման և կառավարման հարցերում, ինչը դեռահասի դաստիարակության եզրույթում վարքի բարոյաիրավական նորմերի ճիշտ ձևավորման գրավականն է[21]: Նմանօրինակ թերացումները չարամտության արդյունք չեն, այլ ծնողներից և միջավայրից ստացած դաաստիարակության հետևանք:

Հետազոտության համատեքստում իրականացրել ենք պրոյեկտիվ թեստավորում միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների շրջանում: Միակողմանի ծնողազուրկ երեխայի ինքնանկարում գլուխը պատկերված էր մեծ չափով: Սա խոսում Է մեծ ինտելեկտուալ հավակնությունների մասին: Նկարում աչքերը փոքր էին, ինչը բնորոշում է ինտրովերսիայի միտումը: Ինքնանկարում բերանը ընդգծված էր. այն վկայում է խոսքի հետ կապված հնարավոր դժվարության մասին: Ատամները պատկերված էին սուր, ինչը արտահայտում Է երեխայի ագրեսիվությունը: Մեծ ականջների և քթանցքների ընդգծվածությունից ենթադրվում է քննադատության նկատմամբ բարձր զգայունություն և ագրեսիայի հակվածություն: Ձեռքերը կաշկանդված էին, ինչը բնորոշում է երեխայի փակ ու կոմպլեքսավորված բնույթը: Ոտքերը բացասակայում էին՝ այն մեկնաբանվում է որպես հենարանի բացակայություն: Նկարում պատկերված էր նաև ծառ,որի բույնը և ճյուղերը մի գծի վրա էին, ինչը ենթադրում է գորշ իրականությունից փախչելու ձգտումը և հրաժարումը՝ իրերին նայելու իրական աչքերով: Ինքնանկարում պատկերված էր նաև քաղաքային միջավայրի տուն: Այն վկայում է երեխայի ինքնամփոփ բնույթի և սեփական խնդիրների մեջ ներգրավվածության մասին: Տան պատուհանները փոքր էին, ինչը բնորոշում է երեխայի ամաչկոտությունը և հոգեբանական փակվածությունը: Երեխան իրեն նկարել էր տան մեջ, ինչը վկայում էր պաշտպանված լինելու պահանջմունքի մասին: Հաջորդիվ իրականացրել ենք նույն պրոյեկտիվ թեստավորումը երկկողմանի ծնողազուրկ երեխայի հետ: Ինքնանկարում երեխան մեծ գլուխ ուներ, ինչը բնորոշում էր ինտելեկտուալ հավակնությունները: Աչքերը մեծ էին՝ բնորոշող կասկածմտություն, բերանը ծամածռված էր, իբրև հարկադրված սիրալիրություն, ատամները շատ սուր էին՝ ագրեսիվության արտահայտությամբ, քիթն ու ականջները փոքր էին՝ միջավայրից չընդունելու որևէ քննադատություն: Ձեռքերը նկարում կախված էին, որպես վկայություն երեխայի խնամքի և հոգատարության կարիքի վերաբերյալ: Ինքնանկարում բացակայությում էին ոտքերը՝ վկայող անկայունության և հենարանի բացակայությաւն մասին: Երեխան նկարել էր ծառ խառնված ճյուղերով, ինչը արտահայտում էր ինքնահաստատման փնտրտուքը: Ընդարձակ գյուղական տունը խորհրդանշում էր երեխայի ընտանիք ունենալու ձգտումը: Տան դռները բացակայությում էին, ինչը

բնորոշում էր ինքնամփոփությունը: Տան փոքր պատուհանները խորհրդանշում էին երեխայի հոգեբանական փակվածությունը: Նկարը գտնվում էր թղթի վերին հատվածում, ինչը վկայում էր երեխայի բարձր ինքնագնահատականի, ինքնահաստատման հավակնության մասին:

Եզրահանգում

Ընտանեկան բնականոն դաստիարակության գործընթացը իրականացվում է լիարժեք ընտանիքում ծնողների երկկողմ մասնակցությամբ: Այն առողջ սերունդ և բարձր արժեքներով անհատ դաստիարակելու հիմնաքարն է: Անձի սոցիալական արժեհամակարգի ձևավորումը սկսվում է առողջ ընտանեկան դաստիարակությունից, շարունակվում է կրթական համակարգում՝ ձևաավորելու անհատ հասարակություն փոխհարաբերությունը:

Որպես շեղվող վարքի շտկման արմատական միջոց առաջադրել ենք.

- Անհամատեղելի ծնողների հետ իրականացնել հոգեբանական անհամատեղելիությունը մեղմող աշխատանքներ՝ ընտանիքում հոր կերպարի ամրացման, մայրական քնքշանքի, հոգատարության արտահայտման հատկանիշների ուժեղացման համատեքստում:
- Անհամատեղելի ծնողների հետ իրականացնել բարոյահոգեբանական աշխատանքներ ռեֆլեքսային ինքնակառավարման, ինքնաքննադատությունների իրականացման, օբյեկ-տիվ ինքնագնահատման, փոխադարձ զիջումների համատեքստում:
- Անհամատեղելի ծնողների ընտանեկան դաստիարակության եզրույթում գիտելիքներով ապահովման, մանկավարժական պատրաստվածության աշխատանքների իրականացում:

Գրականություն

1. **Скиннер Б. Ф.,** Оперантное поведение // История зарубежной психологии (30-60-е гг. XX в. Тексты) / под ред. П. Я. Гальперина, А. Н. Ждан, Москва, Издательство МГУ, 1986, С. 56–72.
2. **Захаров А. И.,** Происхождение детских неврозов и психотерапия. Москва, Эксмо-Пресс, 2000, 448 с.
3. **Greco L., Morris T.,** Paternal child-rearing style and child social anxiety: investigation of child perceptions and actual father behavior // Journal of Psychopathology and Behavioral Assessment. 2002, Vol. 24, No. 4, P. 259–267.
4. **Виткин Д.,** Мужчина и стресс. Санкт-Петербург, Питер Пресс, 1996, 224 с.
5. **Fthenakis W. E.,** Väter. Band II: Zur Vater-Kind-Beziehung in verschiedenen Familien-Strukturen. München, Urban & Schwarzenberg, 1988, 426 p.
6. **Ильин Е. П.,** Дифференциальная психофизиология мужчины и женщины, Санкт-Петербург, Питер, 2002, 544 с.
7. **Дружинин В. Н.,** Психология семьи, Санкт-Петербург, Питер, 2005, 176 с.

8. **Коркина Н. А.,** Отцовство в современной семье // Психологические проблемы современной российской семьи, материалы II Всероссийской научной конференции, в 3 ч, Ч. 1 / под общ. ред. В. К. Шабельникова, А. Г. Лидерса, Москва, 2003, С. 117–123.
9. **Горьковая И. А.,** Медико-психологическое исследование формирования характера делинквентных подростков, автореф. дис. ... канд. психол. Наук, 19.00.04, Санкт-Петербург, 1992, 26 с.
10. **Blum H. M., Boyle M. N., Offord D. R.,** Single-parent families, child psychiatric disorder and school performance // Journal of the American Academy of Child & Adolescent Psychiatry, 1988, Vol. 27, No. 2, P. 214–219.
11. **Drake C. T., McDougall D.,** Effects of the absence of a father and other male models on the development of boy's sex roles // Developmental Psychology, 1977, Vol. 13, No. 5, P. 537–538.
12. **Попова П.,** Современный мужчина в зеркале семейной жизни, Москва, Мысль, 1989, 188 с.
13. **Чиркова О. Б.,** Роль детско-родительских отношений в развитии ответственности подростков // Психология XXI века, тезисы Международной межвузовской научно-практической студенческой конференции, Санкт-Петербург, 2000, С. 193–195.
14. **Արզումանյան Ս. Ջ., Արզումանյան Ա. Ս.,** Սոցախտաբանությունը որպես իրավաբանական հոգեբանության ինքնուրույն բնագավառ // Գիտական տեղեկագիր (Հումանիտար գիտություններ), 2004, № 1, էջ 172:
15. **Арзуманян С. Д.,** Социально-психологические условия исправления и перевоспитания личности несовершеннолетних, учебно-методическое пособие, Ереван, Луйс, 1985, 98 с.
16. **Арзуманян С. Д.,** Микросреда и отклонение социального поведения детей и подростков, Ереван, Луйс, 1980, 254 с.
17. **Արզումանյան Ա. Ս.,** Սոցիալական ոչ համարժեք ընկալումները որպես անձի սոցախտածին զարգացման հոգեբանական նախադրյալներ // Կանթեղ,Գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2004, էջ 61–69:
18. **Բաղալյան Գ. Ա.,** Հետաղետյան շրջանում դեռահասների ու պատանիների իրավախախտումների քրեահոգեբանական և սոցիալհոգեբանական վերլուծությունը, Ատենախոսության սեղմագիր ... հոգեբ. գիտ. Թեկնածուի, ԺԹ.00.01, Երևան, 2004, 28 էջ:
19. **Хачикян Г. С.,** Эмоциональные состояния как элемент субъективной стороны преступного поведения, автореф. дис. ... канд. психол. Наук, 19.00.06, Ереван, 2005, 26 с.
20. **Չատինյան Ա. Ա., Ուռյան Մ. Ա.,** Ընտանեկան դաստիարակության հիմունքները, ուսումնական ձեռնարկ, Երևան, Էդիթ Պրինտ, 2019, 104 էջ:
21. **Արզումանյան Ս. Ջ., Գրին Է.,** Իրավաբանական հոգեբանություն, Երևան, Զանգակ-97, 2004, 432 էջ:
22. **Գևորգյան Ն. Է.** Սպորտը և դժվար դեռահասների վարքի շտկումը, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2021, էջ 23:

23. **Գևորգյան Ն. Է.,** Դեռահասների շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, ատենախոսություն ... հոգեբ. գիտ. թեկնածուի, ԺԹ.00.01, Երևան, 2014, 162 էջ:
24. **Արզումանյան Ս. Ջ.,** Իրավաբանական հոգեբանություն, Երևան, Զանգակ-97, 2003, 176 էջ:

FAMILY UPBRINGING AS A MEANS OF CORRECTING DEVIANT BEHAVIOR

Natalia E. Gevorgyan
University named after M. Mashtots,
Yerevan, M. Heratsi St., 2/1,
e.mail: natalya.gevorgyan@sportedu.am

Abstract

The paper examines the psychological foundations of the emergence of behavioral deviations within the framework of family upbringing. The study addresses the problem of raising an adolescent in a complete family as a crucial condition for the stable formation of their worldview, the absence of which entails a complex of antisocial behavior and the violation of socially accepted norms. Driven by socio-political changes, the socio-psychological characteristics of the environment have transformed, including the moral and psychological climate of the family affecting adolescent upbringing, which has left children and adolescents in highly vulnerable groups. In this context, the study of behavioral deviations is of exceptional importance, particularly from a psychological perspective. The primary factors contributing to the emergence of deviant behavior have been analyzed, and preventive measures have been proposed.

Keywords: dysfunctional family, deviant behavior, criminogenic, delinquent, antisocial behavior, father figure, moral and psychological, moral and legal condition, adolescent.

Novelty

Numerous psychologists have studied the risks of individual behavioral deviations conditioned by environmental influences.

C. Lombroso substantiated the role of biological factors underlying criminal behavior, remaining a proponent of "crude materialism."

Later, drawing upon the works of C. Lombroso, E. Ferri developed the concept of social factors contributing to juvenile delinquency, becoming the founder of the biosocial theory of crime.

B. F. Skinner argued that human behavior is shaped by the environment, controlled by the environment, and is predictable. At the same time, he denied that human behavior is determined by internal "autonomous" factors.

Behavioral deviations among adolescents are the result of both biological and social factors, particularly an unfavorable environment and the negative impact of the family.

We have investigated behavioral deviations conditioned by the factor of a dysfunctional family in the following context:

1. the impact of the family on adolescent psychology;
2. the preconditions for the emergence of deviant behavior;
3. the predominance of the father's role in the process of adolescent development and behavior formation;
4. the negative impact of incompatible parents on the upbringing and moral-psychological state of the adolescent;
5. behavioral manifestations conditioned by the moral and psychological decline of the adolescent.

As a result of the study, we identified the predominance of the absence of the father figure as a primary precondition for the emergence of deviant behavior.

Conclusion

The process of normal family upbringing is carried out in a complete family with the bilateral participation of both parents. It is the cornerstone of raising a healthy generation and an individual with high values. The formation of a person's social value system begins with healthy family upbringing and continues within the educational system, shaping the relationship between the individual and society.

As a radical means of correcting deviant behavior, we propose:

- To carry out psychological work with psychologically incompatible parents aimed at mitigating their interpersonal incompatibility in the context of strengthening the father figure in the family and enhancing the expression of maternal tenderness and care.
- To conduct moral and psychological work with incompatible parents in the framework of developing reflective self-regulation, practicing self-criticism, objective self-assessment, and mutual compromise.
- To provide incompatible parents with essential knowledge in the field of family upbringing and to implement targeted activities to improve their psycho-pedagogical preparedness.

СЕМЕЙНОЕ ВОСПИТАНИЕ КАК СРЕДСТВО КОРРЕКЦИИ ОТКОЛОНЯЮЩЕГОСЯ ПОВЕДЕНИЯ

Наталиа Э. Геворгян
Университет им. М.Маштоца,
Ереван, ул. Гераци, 2/1,
e.mail: natalya.gevorgyan@sportedu.am

Аннотация

В работе исследованы психологические основы возникновения поведенческих отклонений в контексте семейного воспитания. Изучена проблема воспитания подростка в полной семье как условия устойчивого формирования его мировоззрения, отсутствие которого влечет за собой комплекс антисоциального поведения и нарушения общественно принятых норм. Под влиянием общественно-политических изменений трансформировались социально-психологические особенности среды, в том числе морально-психологический климат семьи, влияющий на воспитание подростка, в результате чего дети и подростки оказались в наиболее уязвимых группах. В данных обстоятельствах изучение поведенческих отклонений приобретает исключительную важность, особенно с психологической точки зрения. Исследованы первичные факторы возникновения девиантного поведения и предложены меры его профилактики.

Ключевые слова: неблагополучная семья, девиантное поведение, криминогенный, делинквентный, асоциальное поведение, образ отца, морально-психологический, морально-правовое состояние, подросток.

Новизна

Многочисленные психологи изучали риски поведенческих отклонений личности, обусловленные влиянием окружающей среды.

Ч. Ломброзо обосновал роль биологических факторов в основе преступлений, оставаясь сторонником «грубого материализма».

Позднее, опираясь на труды Ч. Ломброзо, Э. Ферри развил концепцию социальных факторов, способствующих детской преступности, став основателем биосоциальной теории преступности.

Б. Ф. Скиннер утверждал, что поведение человека формируется под воздействием среды, управляется ею и является предсказуемым. Одновременно он отрицал обусловленность поведения человека внутренними «автономными» факторами.

Поведенческие отклонения подростков являются следствием воздействия биологических и социальных факторов, особенно неблагоприятной среды и негативного влияния семьи.

Мы исследовали поведенческие отклонения, обусловленные фактором неблагополучной семьи, в следующем контексте:

1. влияние семьи на психологию подростка;

2. предпосылки возникновения девиантного поведения;
3. доминирующая роль отца в процессе развития подростка и формирования его поведения;
4. негативное влияние психологически несовместимых родителей на воспитание и морально-психологическое состояние подростка;
5. поведенческие проявления, обусловленные морально-психологическим упадком подростка.

В результате исследования мы выявили, что доминирующей предпосылкой возникновения девиантного поведения является фактор отсутствия образа отца у подростка.

Заключение

Процесс естественного семейного воспитания осуществляется в полной семье при двустороннем участии обоих родителей. Он является краеугольным камнем воспитания здорового поколения и личности с высокими ценностями. Формирование социальной системы ценностей личности начинается со здорового семейного воспитания и продолжается в системе образования, выстраивая взаимоотношения между личностью и обществом.

В качестве радикального средства коррекции девиантного поведения предлагается:

- Проводить работу с психологически несовместимыми родителями, направленную на смягчение их межличностной несовместимости в контексте укрепления образа отца в семье, а также усиления проявлений материнской нежности и заботы.
- Осуществлять морально-психологическую работу с несовместимыми родителями в контексте развития рефлексивного саморегулирования, практики самокритики, объективной самооценки и взаимных уступок.
- Обеспечить несовместимых родителей необходимыми знаниями в области семейного воспитания и реализовать мероприятия по повышению их психолого-педагогической подготовки.